«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Հաստատություն՝ Երևանի հ.107 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Լարիսա Հարությունյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն _____3

Գլուխ 1. Էքսկուրսիան, որպես կրթադաստիարակչական գործունեության ձև

1.1 Էքսկուրսիաների կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները_____7

1.2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում_____11

Գլուխ 2. Էքսկուրսիաների և մշակութային այցերի օրինակներ՝ իմ աշխատանքային փորձից_____15

Եզրակացություն_____17

Գրականության ցանկ_____18

Ներածություն

Անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է նախադպրոցական տարիքը: Շատ կարևոր է թե այս շրջանում երեխային ինչ պետք է սովորեցնել և հաղորդել, իսկ առավել կարևոր է՝ թե ինչպես, ինչ մեթոդներով և ձևերով այդ անել: Յուրաքանչյուր երեխա նախադպրոցական տարիքում չափազանց հետաքրքրասեր է և անհագ իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ, սպունգի նման կլանելով գիտելիքները: Նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացվող կրթադաստիարակչական գործունեության ընթացքում առավելագույնս պետք է ճիշտ օգտագործել երեխայի հետաքրքրասիրությունը աշխարհի ընկալման հարցում: Հենց այս ժամանակահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սերը հայրենիքի և բնության նկատմամբ: Հետաքրքրասիրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումը անձի և հասարակության մասին: Պարբերաբար կազմակերպվող մշակութային այցերը և էքսկուրսիաները մեծապես նպաստում են երեխաների գիտելիքների ձևավորմանը:

Ուսումնական և դաստիարակչական այս առանձնահատկությունները հնարավորություն են տալիս բնական պայմաններում դիտարկել առարկաները և երևույթները: Միառժամանակ երեխայի մոտ ակտիվացնելով մտավոր և հուզական ոլորտը: Ուսումնադաստիարակչական նպատակներով այցելությունների կարևոր մաս են կազմում էքսկուրսիաները, մշակութային այցերը, տեսարժան վայրերը, թանգարանները, գրադարանները, թատրոնները, արտադրական ձեռնարկությունները և պատմամշակութային կոթողները նաև այցելություններ բնության գիրկ:

Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ, այն զննական մեթոդ է: Փորձը ցույց է տալիս, որ երեխաներին դուր են գալիս էքսկուրսիաները և մշակութային այցերը:

<< Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում>> թեմայի

ընտրությունը պայմանավորված է նրանով, որ խիստ կարևորում ենք մշակութային այցերի, էքսկուրսիաների և առհասարակ մշակույթի դերը երեխայի ընդհանուր զարգացման, աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայնման, տրամաբանական մտածողության գործում:

Թեմայի արդիականություն- Իսկապես մեզ բախտ է վիճակվել աշխատել 21-րդ դարի ուսումնական հաստատությունում: Ինչը մեզանից պահանջում է անընդհատ նոր մոտեցումների, առավել ռացիոնալ մեթոդների գործունեության, ավելի հետաքրքրաշարժ ու ժամանակակից ձևերի կիրառման, արդի ուսուցումը կյանքի հետ կապելու, կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով: Հենց այդպիսի գործունեության ձևերից մեկն է մշակութային այցերը և էքսկուրսիաները:

Էքսկուրսիան նախադպրոցական ուսումնական պրոցեսում օգտագործվող մեթոդներից մեկն է, որի միջոցով սաները ամրապնդում են իրենց անցած տեսական գիտելիքները, ծանոթանում հայրենի բնությանը, մոտիկից տեսնում յուրաքանչյուր կենդանի օբյեկտը, իրն ու առարկան, հարստացնում գիտելիքների պաշարը և ընդլայնում մտահորիզոնը:

Համապատասխանությունը նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին

Ըստ նոր ծրագրային պահանջների գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ, պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստա-գեղագիտական դաստիարակության խնդիրները և ըստ գործութեության ձևերի այդ խնդիրներց շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում և հենց այստեղ է, որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների ու մշակութային այցերի ընձեռած հնարավորությունները, քանի որ գործունեության այս ձևով ապահով է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը և ձևավորում կատարողունակությունները հատկապես՝

ա. Լեզվական հաղորդակցական

բ. ճանաչողական մոտիվացիան

գ. ինքնաճանաչողական և սոցիալական

դ. ժողովրդավարական և քաղաքացիական

ե. մշակութային

զ. տնտեսական

է. ֆիզիկական

Նպատակը նկատի ունենալով թեմայի արդիականությունը շատ կարևորելով ուսուցման ու դաստիարակության գործունեության ձևը իմ հետազոտական աշխատանքի կատարումը նպատակ ունի տեսական նյութի ուսումնասիրմամբ, էքսկուրսիաների և մշակութային այցերի անձնական փորձից ներկայացմամբ ևս մեկ անգամ կարևորել գործունեության այս ձևը: Ներկայացնել դրանց արդյունավետությունը սանի զարգացման գործում և կատարել առաջարկներ, որոնք կնպաստեն դրա ակտիվացմանը:

Գլուխ 1 Էքսկուրսիան, որպես կրթադաստիարակման գործունեության ձև

Երբ ուսումնասիրում ենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական ձեռնարկ, ուղեցույց(ռուսական գրականություն), կրթության և դաստիարակության ձևերի և մեթոդների շարքում առաջին տեղում էքսկուրսիան է: Երբ և ում կողմից է իրականացվել առաջին էքսկուրսիան, ընդհանրապես չի հիշատակվում պատմության մեջ: Բայց մենք հաստատ գիտենք, որ որպես ուսումնական մեթոդ էքսկուրսիաները սկսեցին ներմուծվել կրթական գործելաձև Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի մանկավարժների կողմից 18 դարի վերջին և 19 դարի սկզբին: Ուսուցման այս ձևի անվանումը գալիս է լատիներեն՝ << Էքսկուրսիա>> բառից, այն իսկզբանե նշանակում էր << արշավանք>>:

Էքսկուրսիան կրթական ժամանցային նպատակով կազմակերպված կոլեկտիվ ուղևորություն, զբոսանք, շրջագայություն է դեպի բնություն, տեսարժան վայրեր, արդյունաբերական կամ կրթական կառույցներ: Էքսկուրսիայի էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համադրության մեջ: Եթե համադրությունից բացակայի ցուցադրումը, ապա այն կվերածվի պարզապես զրույցի: Իսկ եթե էքսկուրսիան զուրկ լինի բացատրությունից, ապա ցուցադրումն էլ իր հերթին կվերածվի ուղղակի տեսարժան վայրի այցելության: Ուսուցման կազմակերպման այս ձևը կիրառելի է նաև նախադպրոցական հաստատություններում, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց: Հետևաբար ուսումնադաստիարակչական գործընթացում գիտելիքի հաղորդումը ցանկալի է պարբերաբար կատարել էքսկուրսիաների միջոցով, քանի որ այդ ձևով յուրացումը ավելի կայուն և խորն է: Այն ինչը տեսնում է սանը, տպավորվում է նրա գիտակցության մեջ, դաստիարակը ցուցադրելով միառժամանակ սովորեցնում է ճիշտ ընկալել տեսածը: Այսպիսով էքսկուրսիաները օգնում են նախադպրոցական տարիք սաներին պատկերացում կազմել շրջապատող աշխարհի մասին հենց լասծը տեսնելու, վերացականը ակնառու դարձնելու և իրադրությանը մասնակից լինելու միջոցով:

1.1 Էքսկուրսիաների կառուցվածքը, կազմակերպման ձևերն ու մեթոդները

Էքսկուրսիան բնույթով աշխույժ է և հուզիչ, դաստիարակի շփման ոճը սաների հետ պետք է լինի ավելի անկեղծ և նուրբ: Սաները պետք է գիտելիք ձեռք բերեն առանց նույնիսկ դա գիտակցելու:

Էքսկուրսիայի բովանդակությունը պարտադիր պետք է համապատասխանի երեխաների տարիքին և հետաքրքրություններին: Առարկաների թիվը պետք է սահմանափակ լինի և կենտրոնացվի ուշադրությունը դրանց վրա: Այսպիսով երկրորդ կրտսեր խմբում, բնության գրկում էքսկուրսիայի ժամանակ պետք է կենտրոնանալ միայն մեկ, երկու առարկայի վրա, այսինքն՝ այգում տեղի ունեցող երևույթների(բերքահավաք, տերևաթափ): Յուրաքանչյուր տարիքային խումբ ունի էքսկուրսիաների իր առանձնահատկությունները:

7

Կազմակերպչական պահեր.

Յուրաքանչյուր տարիքային խումբ ունի իր առանձնահատկությունները, իհարկե էքսկուրսիա կազմակերպել ավելի դժվար է, քան՝ ավանդային խմբային պարապմունքը: Դաստիարակը նախօրոք մտածում է միջոցառման բոլոր պահերի մասին, նեռարյալ ճանապարհին անցկացրած ժամանակը և որոշում է իր հետ վերցնել օգնականի՝ դաստիարակի օգնական, մեթոդիստ կամ ծնողներից մեկը: Որքան էլ դաստիարակին ծանոթ լինի էքսկուրսիայի վայրը, նա նախապես զննում է այն և անհրաժեշտության դեպքում պատրաստում նյութեր՝ այգի ալցելելու զամբյուղներ: Դաստիարակը նաև սահմանում է էքսկուրսիաների առանձին մասերի անցկացման հաջորդականությունը,կոլեկտիվ և առանձին դիտարկումների ու հանգստի համար: Դաստիարակը ուշադրություն է դարձնում սաների հագուստին, որոնք պետք է համապատասխանեն տարվա եղանակին:

Էքսկուրսիային մասնակցող երեխաների թիվը կախված է նրանց տարիքից: Այսպիսով կրտսեր նախադպրոցական տարիքում նպատակահարմար է իրականացնել

Էքսկուրսիայի անցկացման մեթոդները

Էքսկուրսիաների կազմակերպման և անցկացման մեթոդներին ներկայացվող պահանջները.

- Բովանդակության համապատասխանությունը երեխաների հետաքրքրություններին
- Թեմայի ուղղված լինելը, այսինքն ոչ մի պատահական երևույթ չպետք է շեղի սանի ուշադրությունը հիմնականից
- Չպետք է ունենա պարապմունքի ավանդական ձև
- Դաստիարակի նախապատրաստում
- Նախապես որոշել այն խոսքի ձևերը, որոնք առաջարկվելու են

- Էքսկուրսիայից հետո դիտել նկարներ, վարել զրույց, դիդակտիկ խաղ, նկարել տպավորություններ
- Էքսկուրսիաների քանակը պլանավորել:

Էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս, պետք է հիշել,որ նույնիսկ հետաքրքիր տեղեկատվության մեծ քանակությունը հանգեցնում է ուշադրության թուլացման:

Առաջարկվում են նախադպրոցական տարիքի երեխաների ուշադրությունը պահպանելու հետևյալ եղանակները.

- Տեսարժան վայրերի ցուցադրում, որոնք պետք է տարբերվեն ճշգրտությամբ, պատկերավորությամբ
- Տեսողական միջոցների օգտագործումը, դրանք օգտագործելիս լսողական ընկալումն անցնում է տեսողականի և ստեղծվում է սթրեսի որոշակի թուլացում
- Կատակներ, հումոր
- Հարց և պատասխան

Էքսկուրսիան հետաքրքիր լինելու համար դաստիարակը պետք է պատրաստի բանաստեղծություններ, հանելուկներ, ասացվածքներ, խաղեր:

Էքսկուրսիայի կառուցվածքը

Էքսկուրսիան մշակելիս պետք է առաջադրել և լուծել ուսումնական, կրթական և զարգացնող բնույթի մի շարք խնդիրներ: Դաստիարակը պլանավորում է էքսկուրսիա ելնելով ծրագրի պահանջներից և շրջակա տարածքի առանձնահատկություններից;

- Ներածական զրույց
- Կոլեկտիվ դիտարկում
- Երեխաների անհատական գործունեություն
- Նյութերի հավաքածու
- Մանկական խաղեր հավաքված նյութերով
- Եզրափակիչ մաս:

9

Պատրաստվելով գալիք էքսկուրսիային, դաստիարակը սաներին նախապես տեղեկացնում է էքսկուրսիայի նպատակը՝ տարվա եղանակին բնորոշ բնության մեջ տեղի ունեցող երևույթները(բերքահավաք, տերևաթափ և այլն):

Անհրաժեշտ է նաև երեխաների հետ քննարկել անծանոթ վայրում վարքի կանոնների պահպանման մասին:

Հիմնական մասում, բացի դաստիարակի ցուցադրումներից, տեղեկատվության տրամադրումից, պետք է սաներին հնարավորություն տալ բավարարել իրենց հետաքրքրությունը, ինքնուրույն և ազատ դիտումներ կատարելով:

Եզրափակիչ մասի հիմնական նպատակն է արդյունքների ամփոփումը: Էքսկուրսիան ավարտելուց հետո, դաստիարակը ամփոփում է երեխաների հետ ճանաչողական գործունեության արդյունքները, տալիս է հուզական գնահատական, արտահայտում է վերաբերմունքը, տպավորությունները, նաև կատարում է ստեղծագործական աշխատանք՝ հատկապես բնության էքսկուրսիայի ընթացքում հավաքված նյութերով:

1.2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում

Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում չափազանց կարևոր են, քանի որ դրանք ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման և դաստիարակման փոխադարձ կապը:

Ուսուցում

Էքսկուրսիաները և մշակութային այցերը նպաստում են աշխարհընկալմանը ու ճանաչմանը, սաների միտքը հարստացնում նոր տպավորություններով, քանի որ նրանք անմիջականորեն դիտում և ճանաչում են այնպիսի առարկաներ և երևույթներ, ինչպիսիք հնարավոր չէ բերել մանկապարտեզ:

Այն հետաքրքրություն է առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, հասարակական երևույթները, մարդու աշխատանքը հասարակության և բնության մեջ, այսպիսով նախադպրոցական սաները ստանում են նոր գիտելիքներ որոշակի թեմայի վերաբերյալ՝ընդլայնելով մտահորիզոնը:

Հայտնի ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է քանի որ երեխան ունի մտքի առարկայի մասին

պարզ ու կոնկրետ պատկերացում: Այլ կերպ հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի և մշակութային այցերի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում կոնկրետ և որոշակի:

Զարգացում

Բոլոր տեսակի էքսկուրսիաները նպաստում են սանի մտածողության զարգացմանը՝ վերլուծելու, ընդհանրացնելու, դասակարգելու, պատճառահետևանքային կապեր հաստատելու, ինչպես նաև ակտիվացնում են սանի ուշադրություն, հիշողություն, զգայական

ունակություն, իսկ թանգարանների, թատրոնների և ճարտարապետական հուշարձանների այցելությունները զարգացնում են ստեղծագործական երևակայությունը, գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակություն, գեղագիտական ճաշակը: Էքսկուրսիաները նաև զարգացնում են սաների շարժողական ակտիվությունը:

Դաստիարակում

Գործունեության այս ձևը նպաստում է սաների բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը, ձևավորում գեղագիտական զգացմունքներ և հուզական արձագանք շրջապատի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ:

Էքսկուրսիաները ձևավորում են գիտակցական կարգապահություն և կազմակերպվածություն, վարքի ճիշտ դրսևորումներ դրսում, հասարակական վայրում, դաստիարակի կարգադրություններին հետևելու և կատարելու ունակություններ:

Նախադպրոցական տարիքի սանի զարգացման համար շատ կարևոր է էքսկուրսիաների բոլոր տեսակների կիրառումը, քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման:

Զբոսանք մանկապարտեզում

Թերևս առաջին էքսկուրսիան, որն առաջարկվում է նախադպրոցականին, սովորաբար կրտսեր 2-րդ խմբի սաներին, դա նրանց շրջագայությունն է մանկապարտեզի տարածքում: Այս էքսկուրսիան սաներին սովորեցնում է կողմորոշվել տարածքում, ծանոթացնում է

հաստատության կառուցվածքին, դրական վերաբերմունք է զարգացնում աշխատողների նկատմամբ և ձևավորում հարգանք նրանց աշխատանքի նկատմամբ: Սովորաբար երեխաներին ցույց են տալիս խոհանոցը, բժշկական սենյակը և այլն: Սաների ուշադրությունը հրավիրելով աշխատանքային գործիքների և իրերի վրա:

12

Բնության էքսկուրսիա

Շատ վաղ ժամանակներից մարդկությունը գնահատել է բնությունը, նրա մեջ տեսնելով ոչ միայն իր կերակրողին այլ իմաստուն դաստիարակին: Բնության էքսկուրսիաները նպատակ ունեն նախադպրոցական երեխաներին ծանոթացնել բնաշխարհին, կուտակել պատկերացումներ նրա տարբեր երևույթների մասին:

Ինչպես հայ մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանն է նկատել << Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով և երևույթնորով, իր պես-պեսգույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերքվ, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է: Այդ

ուսուցիչը ամենահեշտ և դյուրին ձևով, խոր ու կայուն կոերպով սովորեցնում է ճանաչել բնությունը>>:

Մշակութային այցեր

Բնության էքսկուրսիաներց ոչ պակաս կարևոր են նաև մշակութային այցերը՝ թանգարաններ, հուշարձաններ, գրադարաններ, երաժշտական դպրոցներ, որոնք ընդլայնում են սաների մտահորիզոնը, սովորեցնում հասկանալ և գնահատել արվեստը, ինչպես նաև հայրենի երկրի պատմությունը:

Մանկապարտեզի մշակութային անկյունում ներառված են մեր հայկական տարազի հագուստները, երաժշտական գործիքները, անտիկ հնության կավե գործերը: Հայկական մշակույթը փոխանցվում է դարերով՝ սերնդեսերունդ, վաղ տարիքից սերմանվում է սաների մեջ պատմական արժեքները, իսկ մենք մեծերս պարզապես պարտավոր ենք պահպանել և փոխանցել մեր գիտելիքները և հայրենի մշակույթը:

Գլուխ 2 Էքսկուրսիաների և մշակութային այցերի օրինակներ իմ աշխատանքային փորձից

Համագործակցային էքսկուրսիա դեպի աշնանային այգի՝ բերքահավաքի:

Կրտսեր 2-րդ խումբ

Նպատակը՝ ձևավորել շրջակա միջավայրի բնության նկատմամբ հուզական, հոգատար և համապատասխան վերաբերմունք:

Խնդիրները՝ ձևավորել ճանաչողական ունակություններ՝բուսական աշխարհի, տարվա եղանակների, բնության սեզոնային փոփոխությունների մասին և բնության մեջ ճիշտ վարքագիծ դրսևորելու կարողություն հաղորդել:

Ակնկալվող վերջնարդյունքները՝ ճանաչի և անվանի մրգերը, պտղատու ծառը, նկատի բնության գեղեցկությունը, դրսևորի հոգատար վերաբերմունք, կարևորի իր աշխատանքը բնության մեջ:

Նախապատրաստում՝ նյութերի հավաքում զամբյուղներ, պոլիէթիլեն տոպրակներ և այլն: Դաստիարակը սաներին տեղեկացնում է, որ նրանք գնալու են այգի բերքահավաքի, հիշեցնում բնության մեջ վարքի կանոնների մասին:

Հիմնական մաս. Դաստիարակը ցուցադրմամբ ներկայացնում է այգում ծառի կառուցվածքը, պտուղները, սաների ուշադրությունը հրավիրում է բնության գեղեցկությանը և բերքահավաքի գործընթացին: Սաները այգում երգեցին, խաղացին և արտասանեցին: Էքսկուրսիան անցավ ջերմ, աշխույժ մթնոլորտում:

Ամփոփիչ մաս. Էքսկուրսիան ավարտելուց հետո դաստիարակն ու սաները վերլուծեցին էքսկուրսիան: Անհատական հարց ու պատասխանների միջոցով պարզեցին թե ինչքանով են սաները յուրացրել այդ օրվա բոլոր երևույթները, գործունեության այս ձևը շատ կարևոր է փոխարինել խմբասենյակում անընդմեջ թեմատիկ պաստառների ներկայացմամբ և դեկորատիվ իրերի ցուցադրմամբ, որոնք փոքր-ինչ արդի չեն ժամանակակից երեխայի

հետաքրքրությունները բավարարելու համար: Սաների հետ ցանկացած էքսկուրսիա լինի դա թանգարան, դպրոց, այգի թե պուրակ, երեխաների համար դառնում է հիշարժան իրադարձություն: Չէ որ այն, սովորական առօրյայի համեմատությամբ բերում է բազմազանության՝ տալով և գիտելիքներ, և տպավորություն:

Եզրակացություն

Այսպիսով նախադպրոցական ուսումնական հաստատությունում էքսկուրսիաները և մշակութային այցերը մանկավարժական գործընթացի մասն են կազմում: Մեծ բավականություն են ստանում թե մեծերը, թե՝ փոքրերը: Սաների համար, դա ոչ միայն հետաքրքիր ժամանակ է , այլև ուսումնադաստիարակչական գործունեություն, որը զարգացնում է մտածողությունը, ձևավորում է հուզական ոլորտը, դաստիարակում վարքի դրսևորման ձևերը, ինչպես նաև մարզանքների ընթացքում ձեռք բերում ֆիզիկական տոկունություն: Արդյունքում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնում են էսթետիկ զգացմունքներ, գեղագիտական ճաշակ, դաստիարակում են հարգանք ուրիշի աշխատանքի նկատմամբ, հայրենիքի նկատմամբ, բնությունը գնահատելու և պաշտպանելու ցանկություն, ընդլայնում են սաների մտահորիզոնը, ձևավորում աշխարհայացքը, նպաստում խոսքի զարգացմանը, այն սաների մոտ ձևավորում է այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ հանդորժողականությունը, համագործակցությունը, փոխադարձ աջակցությունը, խնդրահարույց իրավիճակում ինքնուրույն մտածողությունը, կողմնորոշումը, միջանձնային հարաբերությունների ձևավորումը, կոնֆլիկտների հաղթահարման որոշակի հմտությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես , Երևան 2014

2. Մանկապարտեզի Կրտսեր 2-րդ խմբի(3-4 տարեկանների) կրթական համալիր ծրագիր

3. Կոնդրոշովա Մ.Ա. << Նախադպրոցականների էկոլոգիական կրթությունը պարապմունքներին և առօրյա կյանքում>> մեթոդական ուղեցույց, 1991թ.

4. Կամեննա Լ.Ա. << Մանկապարտեզում երեխաներին բնությանը ծանոթացնելու մեթոդները>>

5. Նախաշավիղ, 2009թ.